



ԹՈՐՈՍ ԹՈՐԱՄԱՆՅԱՆԻ ԳՈՐԾԻ ՆՎԻՐՅԱԼՆԵՐԻՑ ՄԵԿԸ

Ստեփանի ատենախոսության թեման՝ «Հայկական գավիթի ճարտարապետություն», թեև խիստ կարևոր, սակայն դժվարամատչելի էր: Պահանջում էր վանքից վանք անցնել, փաստագրել այդ խմբին պատկանող տասնյակ հուշարձաններ: Նա դա կատարեց մեծ ջանասիրությամբ ու նվիրումով: Արդյունքում՝ ավարտեց ու իր ատենախոսությունը հաջողությամբ պաշտպանեց Լենինգրադում, ստացավ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճան: Ռուսերեն լեզվով գիրքը լույս տեսավ 1952-ին, երբ ես ստանձնել էի արվեստի պատմության և տեսության սեկտորի վարիչի պաշտոնը: Խոշոր է այս գրքի գիտական արժեքը և որպես այդպիսին իր պատվավոր տեղը գրավեց հայ ճարտարապետության պատմությանը նվիրված հետազոտությունների դասական մատենաշարում: Հանգամանորեն փաստագրված, մանրակրկիտ չափագրված, տիպաբանորեն խմբավորված այս մենագրությամբ հեղինակը գիտական շրջանառության մեջ դրեց հայկական միջնադարյան մոնումենտալ ճարտարապետության ինքնուրույն, տակավին չուսումնասիրված հուշարձանների մի խումբ, նաև եզրահանգումներ՝ գավիթ-ժամատների ճարտարապետության առնչությունները կապված հայկական ժողովրդական բնակելի տների՝ գլխատների հատակագծային հորինվածքների ու փայտակառույց կոնստրուկտիվ համակարգերի հետ:

Ստեփան Մնացականյանը առաջինը խիզախեց անդրադառնալ միջնադարյան Հայաստանի ճարտարապետության դպրոցների հիմնահարցին: Դրան է նվիրված 1960-ին լույս տեսած «Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը» աշխատությունը, որով հեղինակը պատմական Սյունիքի (Սիսական, Վայոց ձոր, Գեղարքունիք) ճարտարապետությունը ներկայացրել է ըստ զարգացման փուլերի ու տիպաբանական խմբավորման, գիտական շրջանառության մեջ դրել մինչ այդ չուսումնասիրված մի շարք հուշարձաններ (Վանեվանի վանական համալիրը, Շողագավանքի և Ալուչալուի եկեղեցիները և այլն): Այդ աշխատության համար նրան շնորհվեց ճարտարապետության դոկտորի գիտական աստիճան: 1964-ին լույս տեսավ «Ակնարկներ հայ ճարտարապետության» գիրքը՝ հեղինակակցությամբ Կ. Հովհաննիսյանի, Ա. Սահինյանի, Ս. Մնացականյանի և ԼԲաբայանի: Դա մի փորձ էր շարադրելու հայ ճարտարապետության ամբողջական պատմությունը՝ ներառյալ խորհրդային ժամանակաշրջանը: Դա, իհարկե, խրախուսելի էր, քանզի Ն.Տոկարսկուց, Ա. Յակոբսոնից ու տողերիս հեղինակի հրապարակումներից հետո կարիք կար այդ ուղղությամբ նոր ջանքեր գործադրել: Բայց, ճիշտն ասած, արդյունքով զոհ չմնացի, ավելին էի սպասում կոլեկտիվ ջանքերով ստեղծված այդ հատորից: Շարադրեցի ընդարձակ (25 էջ) գրախոսություն, սակայն չհրապարակեցի: Իմ դիտողությունները տրամադրեցի իրենց, որպեսզի նկատի առնեն, եթե երբևէ գիրքը վերահրատարակվի: Ստեփան Մնացականյանը առաջին մասնակիցներից եղավ հայ ճարտարապետության իտալացի ուսումնասիրողների գործունեությանը՝ նվիրված հայկական հուշարձանների գիտական վավերագրման մատենաշարի ստեղծմանը: Իր և Ադրիանո Ալպագո Նովելլոյի հեղինակակցությամբ 1967-ին Միլանում, իտալերեն լույս տեսավ մատենաշարի «Հաղպատ» պրակը: Չվարթնոցի տաճարի վերակազմության իր տեսակետով հանդես

եկավ «Պատմա-բանասիրական հանդես», «Լրաբեր» ու այլ պարբերականներում տպագրված հոդվածներով, գիտաժողովներում ունեցած զեկուլցումներով, իսկ ավելի ծավալուն՝ «Զվարթնոցը և նույնատիպ հուշարձանները» գրքով (Երևան, 1971): Նույնը՝ ռուսերեն (Մոսկվա, 1971): Դրանցով նպատակադրվել էր հերքել տաճարի վերակազմության Թ. Թորամանյանի նախագիծը, առաջադրել իրենը: Ըստ իր տարբերակի, տաճարի ծավալատարածական հորինվածքը երկրորդ հարկում խաչաձև էր: Ուզեցինք իր վարկածում համոզվել տեղում: Երկու թե երեք օր ճարտարապետների մեծ խմբով այցելեցինք Զվարթնոցի ավերակները: Տեղում կատարված քննարկումների ու ծագած վեճերի ընթացքում Ստեփանը հոգուտ իր վարկածի չկարողացավ կռվաններ ներկայացնել: Տիրան Մարությանը վճռականապես հանդես եկավ ի պաշտպանություն Թ. Թորամանյանի վերակազմության, ներկայացրեց չնչին ճշտումներ ու արժանազավ բոլորիս հավանությանը, սակայն Ստեփանը մնաց անդրդվելի: Գիտահանրամատչելի բնույթի գրքերի շարքը համալրվեց Ստեփան Մնացականյանի «Երևանը և նրա շրջապատը» (հայերեն և անգլերեն, 1971) գրքուկով: Առավել ծանրակշիռ է Նոնա Ստեփանյանի հեղինակակցությամբ ռուսերեն և անգլերեն 1971-ին Լենինգրադում հրատարակված «Խորհրդային Հայաստանի ճարտարապետական հուշարձաններ» գիրքը: Նույնը գերմաներեն՝ մասնակցությամբ Բ. Բրենդեսի, Բեռլինում 1981-ի հրատարակված է: Սա, իմ կարծիքով, առանձնապես ողջունելի է, քանզի ծառայելու է հերքելուն՝ Էդիտ Նոյբաուերի «**Die Armenische Baukunst**» գրքում, ըստ Գ. Չուբինաշվիլու տեսակետների տեղ գտած անճշտությունները: Հայ ճարտարապետության ամբողջական պատմությունը լուսաբանող աշխատություններին զուգահեռ Ստեփան Մնացականյանը անդրադարձել է նրա առանձին հիմնահարցերին, մասնավորապես՝ ճարտարապետական հուշարձանների դրվագմանը աշխարհիկ պատկերաքանդակներով: Դրան են նվիրված նրա «Հայկական աշխարհիկ պատկերաքանդակը IX-XIV դարերում» (1976թ.) և «Աղթամար» (1983թ.) աշխատությունները: Առաջինում՝ նպատակադրվելով անդրադառնալ հայկական մոնումենտալպատկերաքանդակների արվեստագիտական վերլուծությանը, օրինակները բացառապես վերցրել է իրեն լավ հայտնի ճարտարապետական հուշարձաններից, դրանք իմբավորելով ըստ ժամանակաշրջանների՝ 9-11-րդ և 12-14-րդ դարերի: Բերված օրինակները ամփոփված են լուսամուտների կամարունքներում, մուտքերի բարավորների վրա, գմբեթների թմբուկների կողերին, պատերի հարթություններին, ճակտոններն ու պատերը պսակող քիվերում և այլն: Օրինակներն առանձնապես հարուստ են Աղթամարի Ս. Խաչ տաճարում, որ, հիրավի, ոչ միայն հոյակապ ճարտարապետական հուշարձան, այլև իր դարաշրջանի քանդակագործական արվեստի հանրագիտարան է: Աշխարհիկ պատկերաքանդակների արվեստը բազում դրսևորումներ է ունեցել Անիում ու Կարսում, Գուգարաց աշխարհի Սանահնի ու Հաղպատի վանքերի կտիտորական քանդակներում: Չարգացած միջնադարի երկրորդ փուլում՝ 12-14-րդ դարերում, նույն կարգի, սակայն, քանդակագործական արվեստի առումով առավել կատարյալ, ծավալաձևերով հարուստ են Հաղարծնի, Հառիճավանքի, Դսեղի Բարձրաքար Ս. Գրիգոր ու Աղջոց վանքերի պատկերաքանդակները: Պատմական Վայոց ձորի քանդակագործական արվեստի առավել բարձրարվեստ հիշատակներ կան Սպիտակավոր, Թանահատ և Արատես վանքերի, Եղեգիսի պալատի մուտքի բարավորի վրա: Այս տարածքի գլուխգործոցների՝ Արենիի Ս. Աստվածածին, Նորավանքի Բուրթելաշեն Ս. Աստվածածին եկեղեցու, Ս. Ստեփանոս եկեղեցու գավթի, կտիտորական պատկերաքանդակների հեղինակը վայոցձորյան ճարտարապետական դպրոցի ոճաստեղծ բազմաքանքար Մոմիկն է: Աշխարհիկ պատկերաքանդակների արվեստն ուրույն դրսևորումներ է ունեցել նաև «Հայաստանի Արևելյան կողմանքում» Արցախում: Լավագույն կերտվածքներից են Գանձասարի ու Դադիվանքի կտիտորական պատկերաքանդակները: Չարգացած միջնադարի յուրաքանչյուր փուլում իրենց ստեղծագործությամբ ջահակիրի դեր են կատարել առավել շռայլատաղանդները: 9-11-րդ դարերում այդպիսիք էին Մանուել Վասպուրականցին՝ Արծրունյաց թագավորների պալատական ճարտարապետը, Տրդատ Անեցին՝ Բագրատունյաց թագավորների պալատական ճարտարապետը, իսկ 13-14-րդ դարերում՝ Օրբելյան իշխանների հովանավորյալ Մոմիկ վարպետը: Նրանց

ստեղծագործական մեթոդի վերլուծությանն է նվիրված Ստեփան Մնացականյանի «Վարպետաց վարպետները» ուշագրավ աշխատությունը՝ հրատարակված 1982-ին: Մանուէլ ճարտարապետը ներկայացված է Վանա լճի Աղթամար կղզում կառուցված պալատով ու տաճարով, տաճարի արտաքին պատերի բարձրաքանդակներով ու որմնանկարներով: Առավել բերքառատ է եղել Տրդատ Անեցի ճարտարապետի հունձքը: Նրան վերագրվածներից քննարկման է ենթարկել Արգինայի վանքը, Հաղպատի վանքի Ս. Նշան, Անիի Սմբատյան պարիսպները, Միջնաբերդի պալատական համալիրի մասը կազմած հյուսիսային դահլիճները և գվարթնոցատիպ Ս. Գրիգոր (Գագկաշեն) եկեղեցին: Կարծում եմ, որ կարելի էր ավելացնել նաև Մարմաշենի վանքի գլխավոր եկեղեցին: Հեղինակն այս բաժնում, ինչպես Կոստանդին Հովհաննիսյանը, անդրադարձել է Հայաստանից դուրս ճանաչման արժանացած Տրդատի Կոստանդնուպոլիս հրավիրվելուն՝ 996-ի հուժկու երկրաշարժի հետևանքով վնասված Ս. Սոփիայի տաճարի ամրացումն ու գմբեթի վերաշինությունը իրականացնելու համար: Վարպետներից երրորդը՝ Մովսիկը, ներկայացված է Նորավանքի գեղաքանդակ խաչքարերով, Արենիի Ս. Աստվածածին եկեղեցով, Նորավանքի Բուրթել Օրբելյան իշխանի պատվերով կառուցված կրկնահարկ եկեղեցի-դամբարանով ու նույն վանքի Ս. Ստեփանոս եկեղեցու գավթի վերակառուցմամբ: Հեղինակը հիմնվելով որոշ տվյալների վրա, Մովսիկին է վերագրում Եղեգիսի Չորաց եկեղեցու՝ Տաթևի վանքի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հեղինակությունը: Գրքի վերջում հեղինակը այն ճիշտ կարծիքն է հայտնում, որ վարպետներից յուրաքանչյուրը իր ապրած ժամանակաշրջանի հարազատ ծնունդն է, իսկ նրանց ստեղծագործությունները՝ նույն ժամանակներում իշխող ոճական ուղղությունների արգասիքը: Վերը քննարկած երկու գրքերում Ստեփան Մնացականյանի առանձնակի ուշադրության առարկան է եղել Աղթամարի տաճարը, նրա բարձրաքանդակներն ու որմնանկարները և իհարկե, հեղինակը՝ Մանուէլ ճարտարապետը: Դա էլ հնարավորություն է ընձեռել առավել հանգամանորեն անդրադառնալ Աղթամարի տաճարի ճարտարապետությանն ու զարդարվեստին: Օգտագործելով իր նախորդ գրքերում շարադրածները, նրա հեղինակությամբ երկու անգամ՝ 1983-ին և 1985-ին լույս ընծայեց «Աղթամար» մենագրությունը, առաջին անգամ՝ հայերեն, երկրորդ անգամ, ավելի շքեղ հրատարակությամբ՝ հայերեն, անգլերեն ու ռուսերեն լեզուներով: Դրանցում նա հանգամանորեն անդրադարձել է համալիրի կազմավորման նախադրյալներին, պալատի ու նրան կից Ս. Խաչ տաճարի ճարտարապետությանը: Գրքի երկրորդ մասն ամբողջապես նվիրված է տաճարի քանդակագործական արվեստի ու բովանդակության վերլուծմանը ըստ առանձին գլուխսերի.

Գլուխ առաջին՝ Գլխավոր գոտի,

Գլուխ երկրորդ՝ Պահպանիչ խորհրդանիշների գոտի,

Գլուխ երրորդ՝ Որթատունկի գոտի,

Գլուխ չորրորդ՝ Իշխաններ ու կենդանավազքի գոտիներ, տաճարի ներքնատեսքի մշակումը:

Գիրքը օժտված է այլ հրատարակություններից վերցված գծագրերով ու բազմաթիվ (առաջինում՝ սև ու սպիտակ, երկրորդում՝ նաև գունավոր)

լուսանկարներով: Եզրահանգումներում կան որոշ մերժելի տեսակետներ

(արձանագրություններից մի քանիսի թվագրման փոփոխություն, որոշ

պատկերաքանդակների մեկնաբանումը քաղկեդոնական դավանանքով և այլն):

1978-ին Կ. Հովհաննիսյանի, Ա. Սահինյանի և Ս. Մնացականյանի հեղինակակցությամբ ռուսերեն լեզվով լույս տեսավ «Հին և միջնադարյան Հայաստանի

ճարտարապետությունը» գիրքը: Հայերեն տարբերակի համեմատությամբ, թեև

առավելություն ունի, սակայն սրանում առկա են նախորդի որոշ թերություններ: Ստեփան

Մնացականյանի կոթողային աշխատությունը՝ «Հայաստանի և Բյուզանդիայի 5-7-րդ

դարերի խաչագմբեթ հորինվածքները» (ռուսերեն 1989) խորագրին հետազոտությունն է:

Դա հեղինակի ոչ միայն հայ, այլև հարևան երկրների ճարտարապետության

պատմության լավատեղյակության վկայությունն է, որի շնորհիվ նա ընդարձակել է իր

հետազոտությունների ոլորտը, ընդգրկելով վաղ միջնադարյան Հունաստանի, Ասորիքի և

Բյուզանդիայի եկեղեցական ճարտարապետությունը: Սկզբում քննարկելով հիշյալ

երկրների 4-5-րդ դարերի բազիլիկ տիպի եկեղեցիների հատակագծային, ծավալատարածական հորինվածքներն ու կոնստրուկտիվ համակարգերը, հեղինակը դրանք զուգադրել է հայկական նույն ժամանակաշրջանի բազիլիկատիպ՝ Զասաղի, Դվինի, Տեկորի, Երեբունյքի ու Եղվարդի տաճարներին: Զեղինակն այնուհետև անդրադարձել է բազիլիկներից գմբեթավոր բազիլիկներին (իր անվանմամբ՝ խաչագմբեթ) եկեղեցիների հորինվածքին անցնելուն, իրավացիորեն նշել է, որ Չայաստանում դրա գործընթացը տեղի է ունեցել Դվինի Ս. Գրիգոր և Տեկորի բազիլիկատիպ եկեղեցիների 5-6-րդ դարերում կատարված վերակառուցումներով: Ճարտարապետության դոկտոր Ստեփան Մնացականյանի գիտական վաստակը լրացնում են «Պատմա-բանասիրական հանդես», ՀՀ ԳԱ-ի «Լրաբեր» ու այլ պարբերականներում լույս տեսած մեծաքանակ ու ծանրակշիռ հոդվածները: Թեև նրանցից մի քանիսը պարունակում են որոշակի տուրք՝ ժամանակին իշխող գաղափարական ուղղությանը, սակայն մնացածները մեծ մասամբ ունեն գիտական արժեք